ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2021թ. N279

ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀՐԵՏԱԿՈԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ /01/1.11/8145-2021/ հանձնարարականի պահանջը

որոշում եմ

1.Բերդի տարածաշրջանի հրետակոծության հետևանքների վերականգնողական աշխատանքների հետ կապված հարցերն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.
Խմբի ղեկավար՝

Միսակ Մելքումյան –Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող

Անդամներ՝
Աշոտ Ծորմուտյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության վարչական վերահսկողության իրականացման բաժնի գլխավոր մասնագետ
Արկադի Բոյաջյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության գիտատեխնիկական նորմավորման վարչության գիտատեխնիկական քաղաքականության բաժնի պետ
Ռուբեն Պետրոսյան- Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասնագետ
Արմեն Ճաղարյան - Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ:
2. Հանձնարարել աշխատանքային խմբին.

ս/թ. սեպտեմբերի 15-ից 17-ը ուսումնասիրել Բերդի տարածաշրջանի հրետակոծության հետևանքների վերականգնողական աշխատանքների հետ կապված հարցերը, բողոքները, զեկուցել ինձ և սահմանված ժամկետում տեղեկատվություն ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

14.09.2021

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

14 սեպտեմբերի 2021թ.